«Շիրակացու ճեմարան»
միջազգային գիտակրթական համալիր

ԲԱՑ ՕԼԻՄՊԻԱԴԱ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԲԱՑ ՕԼԻՄՊԻԱԴԱ
2023-2024
Մայրենի (6-րդ դասարան)

Անուն Ազգանուն _____
Դպրոց _____
Դասարան _____ Խումբ _____

Արքայական խոսքը մեր կմնա հավետ...

Վահան Տերյան

1. **Գտի՛ր և ընդգծի՛ր նույն արմատն ունեցող բառերը** (2 միավոր):
   Դռնբաց, փակբերան, հարևան, դրկից, ներս, դուրս, քողտիկ, դրանիկ:

2. **Տրված բառերում մի փոփոխությո՛ւն արա, որ դառնան՝** (3 միավոր)

Բույր-ը՝ անթիվ-անհամար ----------
Սյուն-ը՝ այս ----------
Թույր-ը՝ սխալ բան----------
Հյուր-ը՝ կրակ ----------
Հույն-ը՝ գետի հոսելու տեղը----------
Ոստայնը՝ մայրաքաղաք ----------

3. **Ի՞նչ պիտի անես, որ հազար թվականը դառնա՝** (2 միավոր)
   որքա՞ն հարցին պատասխանող ածանցավոր բառ- ----------
   ինչպիսի՞ հարցին պատասխանող ածանցավոր բառ ----------
   ինչպիսի՞ հարցին պատասխանող և գույների առատություն նշող բարդ բառ ----------
   ինչպիսի՞ հարցին պատասխանող և տարիք նշող բարդածանցավոր բառ ----------

4. **Ամեն շարքում մեկ բառ պակաս է, լրացրո՛ւ** (3 միավոր)

Բարկանալ, զայրանալ, կատաղել----------

Գեղեցիկ, սիրուն, գեղանի----------

Ծոր, զգեստ, հագուստ, ----------

Անկողմնակալ, արդարացի, շիտակ----------

Մառախուղ, մշուշ, մեգ, ----------

Մելամաղձոտ, տխուր, թախծոտ----------

5. **Գուշակի՛ր բառը՝** (2 միավոր)

Դժոխք բառի հականիշը+ *տեղ* բառի հոմանիշը =

Չար բառի հականիշը + մեր մարմնին արյուն մատակարարող օրգանը=

Տղամարդ բառի հոմանիշը+ ու + *նժույգ* բառի հոմանիշը=

Բարձրանալ բառի հոմանիշի արմատը + և + *գիջել* բառի արմատը=

6. **Ասա՛ մեկ բառով** (2 միավոր)

Աշխարհով մեկ լինել

Պատի ծեփ դառնալ

Մատ թափ տալ

Խելքահան անել

---

7. **Պատկերացրո՛ւ, որ բնության երևույթները, ծառերը խոսել գիտեն: Հորինի՛ր անձրևի և ծաղկած ծառի զրույցը** (6 միավոր):